## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ (ԱՆՑՅԱԼՈՒՄ ԲԱՇՔԵՆԴ)

**471. *ԽԱՉՔԱՐ, մեծ, պարզ. քիվին, շրջանակին և ստորին մասում 3 տող.***




ԿԱՆԿ[Ա]ՆԵՑՕ ՍԲ. ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ[ՒՆ]
ԳԱԼԱՏՈԿԻՆ. ԹՎ. ։ՋՁԵ։(1536)։

Ծանոթ. *ԱՒ-ի փոխարէն օ երբեմն հանդիպում է նաև արձանագրությունների մեջ։*

*Անձնանունը ենթադրական է։*

**472. *ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ, ճակատին կրոնական տեսարան, Քրիստոսին խոցող երկու զինվորներ և ուրիշներ. քիվին 2 տող.***




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[Ե]Խ[ՕՍ]Ս ՄԱՐՏՈՍԻՆ։

Ծանոթ. *Երկու խաչքարերն էլ ագուցված են գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ։*

## ԱՂԿԱԼԱ-ԱՂՋԻԲԻՐ (ԼՃԱՓ)

**473. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ. կանգնած է խճուղու եզրին, նորաշեն աղբյուրի և ճաշարանի մոտ, որտեղից ճանապարհները խճուղուց բաժանվում են դեպի Ակղիբիր և Աղկալա գյուղերը. իր տեղումն է պատվանդանը և նրա վրա խաչքարի ստորին մասի մի փոքր կտոր. վերևի մեծ մասը մի քանի կտորներով ընկած է շուրջը, մի մեծ բեկորի վրա, որը խաչքարի հյուսիսային կողն է, մնացել է 11 կարճ, և մի փոքրի վրա, որը վերին մասն է՝ 2 տող. մնացածը խաչքարի տակ և պատվանդանի վրա.***




Ի ԹՎԻՍ ։ՁԻԳ։ (1274) ԵՍ—ՄՈՒՍԱՏԱՅՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱ[Չ]Ս. ՈՐՔ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԷՔ Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՑԷՔ ԻՆՋ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ։

Ծանոթ. *Կողի վերևի մասում գրիչը թվականը ջնջել է և նոր տողից գրել։*

*Հրատարակիչներն անձնանունը վերծանել են՝ Սմբատյանցը՝ ԱԲՈՒՍԱԼՄ, Լալայանը՝ ԱԲՈՒՍԱԼՄԱՑՍ. գրերի պահպանված մասերի տեղադրությունից երևում է, որ անվան սկզբի ԱԲՈՒՍԱԼՄ մասի համար տեղ չկա. այդտեղ ընդամենը մի տառի տեղ կա. կարծում ենք, որ պարզապես ՄՈՒՐԱՏՍ պետք է լիներ և գրիչը ՄՈՒՐԱՏԱՑՍ է գրել, ինչպես ուրիշ շատ դեպքերում։*

*Հրատ. Սմբատյանց, 432։ Լալայան, XVIII, 124։*
Լուսանկ. 110 *(երկու մասից)*.